

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր



ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

«Միխիթար Մեբաստացի» կրթահամալիր

Հիմնական դպրոց

Ընթերցարանը կազմել են Հիմնական դպրոցի 5-րդ դասարանի սովորողները: Բանաստեղծությունները նախատեսված են կրտսեր տարիքի սովորողների համար: Նվիրվում է Չարենցի պոեզիայի բոլոր երկրպագուներին:

Նկարագարդումը՝ Հիմնական դպրոցի 5-րդ դասարանի սովորողների:

ԱՌԱՋԱԲԱՆ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում մենք միշտ էլ տոնում ենք Եղիշե Չարենցի ծննդյան օրը, սովորում ենք նրա բանաստեղծությունները, տարբեր նախագծեր ենք իրականացնում: Այս անգամ որոշեցինք ընտրել նրա բանաստեղծություններից մի քանիսը, հավաքել դրանք մի գրքում, կազմել հարցեր և ստեղծել էլեկտրոնային ընթերցարան:

Այս մեկ շաբաթվա ընթացքում մենք սովորել և քննարկել ենք Չարենցի բանաստեղծությունները: Կարդում էինք երկար, փորձում ընտրել բանաստեղծություն , որ կրտսեր դպրոցի սովորողներին հարմար լինի: Ի վեջո, սա էլ նպաստեց մեր այս նախաձեռնությանը: Բանաստեղծություններն ավելի հարմար են 5-6-րդ դասարաններում սովորողների համար: Յուրաքանչյուր բանաստեղծության վերջում հարցեր են: Գիրքն ունի բառարան, դժվար և անհասկանալի բառերի բացատրությունը կարող էք գտնել այնտեղ:

Հաճելի ընթերցում:

- - - - -



Կյանքը – երգի, երկնքի՝ պես անհո՛ւն, անհո՛ւն, –
Կյանքը – կորած աստղերի՝ պես հազարանուն:
Կյանքը – կրակ ճահիճներում՝ կա ու չկա, –
Կյանքը – ճամփորդ, սպասված հյուր, որ պետք է գա:
Կյանքը – երգի, երկնքի՝ պես անհո՛ւն, անհո՛ւն, –
Կյանքը – կորած աստղերի՝ պես հազարանուն ...

Հարցեր


1.Քո կարծիքով այս բանաստեղծությանը ի՞նչ է ուզում ասել Չարենցը:

2.Բացատրիր այս տողերը

Կյանքը – կրակ ճահիճներում՝ կա ու չկա, –
Կյանքը – ճամփորդ, սպասված հյուր, որ պետք է գա:

3.Նոր վերնագիր մտածիր:

Գիտե՞ք որ գարուն է արդեն
Բոլորը թափվել են փողոց,
Լսո՞ւմ եք անուշ մի զնգոց-
Գիտե՞ք որ գարուն է արդեն
Դյութում են շրթերը վարդե
Սրտերը կրակ են ու բոց
Գիտե՞ք որ գարուն է արդեն
Բոլորը թափվել են փողոց:




Հարցեր

1. Ո՞րն է քո ամենասիրելի եղանակը:
2. Դուրս գրիր մակդիրները:
3. Բացատրիր տվյալ տողերը
Դյութում են շրթերը վարդե
Սրտերը կրակ են ու բոց:

— — — — —

Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում,
Ինչ որ լավ է՝ միշտ վառ կմնա.
Այս արև, այս վառ աշխարհում
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛:
Մոխրացի՛ր արևի հրում,
Արևից թող ոչինչ չմնա, -
Այս արև, այս վառ աշխարհում
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛:




Հարցեր

1. Բացատրիր այս տողը

Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում:

2. Բանաստեղծությունը վերնագիր չունի, հորինի՛ր:

Ինչքան որ հուր կա իմ սրտում - բոլորը քեզ.
Ինչքան կրակ ու վառ խնդում - բոլորը քեզ. -
Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝
Դո՛ւ չմրսես ձմռան ցրտում, - բոլորը քեզ ...



Հարցեր

1. Համացանցից գտի՛ր տեղեկություն այս բանաստեղծության մասին, իմացի՛ր ո՞ր ժողովածուի մեջ է ընդգրկված:
2. Դուրս գրի՛ր անհասկանալի բառերը և բառարանի օգնությամբ բացատրի՛ր:


— — — — —

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Ու նախրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Միրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև,
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ո՛ր էլ լինեմ - չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան - յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:



Հարցեր

1. Դուրս գրի՛ր մակդիրները:
2. Համացանցից գտի՛ր այս բանաստեղծության երաժշտությունը և լսի՛ր:



Դու – լուսե, անցար ու չկաս:

Դու – թեթե, անմարմին, անծիր:

Դու ուրի՛շ խնդության երագ:

Դու սրտում մեր ընդմիջտ վառեցիր

Կրակներ անմար ու թաքուն:

Փռեցիր լուսավոր գանձեր:

Եվ երբե՛ք, երբեք չի աղոտի

Քո կանթեղը խավար մեր հոգում -

Քո կանթեղը – հեռո՛ւ կարոտի:

Հարցեր

1. Բացատրի՛ր տրված բառերն ու բառակապակցությունները:
Անծիր, խնդության երագ, ընդմիջտ, անմար, կանթեղ, խավար:
2. Համացանցից փնտրի՛ր և գտի՛ր, թե ում է ուղղված այս բանաստեղծությունը:



Գիշերն ամբողջ հիվանդ, խելագար,
Ես երազեցի արեւի մասին:
Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չկար –
Գունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին:
Ես երազեցի արեւի ոսկին,
Տենչացի նրա հրաշքը խնդուն՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն՝
Արեւանման, արնավառ խոսքի, –
Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար –
Խոսքեր չկային, ու արեւ չկար ...

Հարցեր

1. Գրավոր վերլուծիր բանաստեղծությունը:
2. Բացատրի՛ր բառերը:
Երազել, շշուկ, գունատ, տենչալ, արնավառ:

Ոսկեփրփուր, ոսկեպուրպուր,
Փռեմ չորս դին, թափեմ բուռ-բուռ,
Երգերը իմ հրահրան.
Երգով խնդամ թող բուլորին,
Որ մեռնելիս զգամ, որ իմ
Օրերն անցան ու չկորան:



Հարցեր

1. Էլեկտրոնային բառարանի օգնությամբ բացատրի այս բառերը՝
ոսկեփրփուր, չորս դին:
2. Ինչպե՞ս ես հասկանում այս տողերը:
Որ մեռնելիս զգամ, որ իմ
Օրերն անցան ու չկորան:

Ինչքան աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս -
Այնքան աշխարհը անուշ ու ցանկալի կլինի.
Թե ուզում ես չսուզվել ճահճուտները անհունի —
Պիտի աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս:
Այնպե՛ս արա, որ կյանքում ո՛չ մի գանգատ չիմանաս,
Խմի՛ր թախիժը հոգու, որպես հրճվանք ու գինի.
Որքան աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս —
Այնքան աշխարհը անուշ ու ցանկալի կլինի...

Հարցեր

1. Արդյոք բանաստեղծությունը կյանքը հետաքրքիր և ճիշտ
ապրելու եղանակ է առաջարկում:
2. Գրավոր վերլուծի՛ր բանաստեղծությունը:

— — — — —

Հնչում են օրերը, կանչում են,
Օրերը – կարմիր ու բուսր.
Օրերը դողանջ ու հնչուն են,
Զնգում են՝ հրե ու հզոր:

Ու սիրտս զնգում է, զնգում է,
Թռչում է՝ կրակ է ու բոց.
Լսո՞ւմ ես սրտի իմ զնգունը,
Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես, թե ոչ...

Կրակ՝ կա սրտիս մեջ, կրակ՝ կա,
Հրդեհ է՝ վառվում է հրկեզ.
Ալիքը, կուզեմ, որ արագ գա –
Անդարձ է կարոտը երգիս:

Կուզեմ, որ կյանքի մեջ գալիք այն
Երգերս զնգան ու հնչեն
– Կուզեմ, որ լսե, ա՛խ, գալիքը
Երգերս այս վառ ու հնչեղ...

Հարցեր

1. Բացատրի՛ր բառերը՝ հրկեզ, գալիք, անդարձ, հնչեղ:
2. Մեկնաբանի՛ր այս քառատողը:
Կուզեմ, որ կյանքի մեջ գալիք այն
Երգերս զնգան ու հնչեն
– Կուզեմ, որ լսե, ա՛խ, գալիքը
Երգերս այս վառ ու հնչեղ...
3. Բանաստեղծության մեջ գտիր հոմանիշ բառեր:

— — — — —
Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Միրեկանը էլի յարին կմնա:
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՛ սարին կմնա:

Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ե՛ս չեմ ասե — նա՛ կասե վաղը.
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:

Հազար վարդ կբացվի աշխարհի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարհի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարհի մեջը —
Էշխը կբակ կըլի՛ արին կմնա:

Ուրիշ սրտի համար կթավի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը.
Գոգալը լաց կըլի, կընկնի արցունքը —
Գերեզմանիս մարմար քարին կմնա:



Հարցեր

1. Ինչի մասին էր բանաստեղծությունը:
2. Բանաստեղծությունը պատկերող մի նկար նկարի՛ր:

ԾԻԱԾԱՆԸ

Լուսամփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՛ պես երազի.
Կապո՛ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի՛ պես աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում.

Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն,
Որ չցնդի, չմարի՛ իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՛ պես երազի,
Կապո՛ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի՛ պես աղջիկ...

Հարցեր

1. Բացատրի՛ր վերնագիրը:
2. Նկարագրի՛ր աղջկան:

Հավելված Ի՞նչ են ասել հայտնի մարդիկ Չարենցի մասին

Չարենցը մեր բանաստեղծության վերջին հեղափոխականն է, այսինքն՝ նորարարը:

Եվ Չարենց ասելիս նախ և առաջ այս պիտի հասկանալ՝ երբեք չմոռանալու պայմանով:

Նա մեր բազմադարյան քերթության սակավաթիվ ձևարարներից մեկն է:

Պարույր Սևակ

...Չարենցի անունը պայթեցրումբի նման:

...Ու ես տեսա, ճանաչեցի Չարենցին: Նոր էր այդ աշխարհը, իրերը, ռիթմը, պատկերները, գույներն ու ստվերները: Նոր էր աշխարհը, առնական, խորին: Հեղափոխությունը ես՝ Եղրշե Չարենցով ընդունեցի այն ժամանակ:

Գուրգեն Մահարի

Նա մեր մեծագույն բանաստեղծն է, մեծ է նրա ազդեցությունը մեր գրականության վրա, մեր երիտասարդության վրա:

Ակսել Բակունց

Չարենցը խոհուն, զարգացած, մեծ ինտելլեկտի տեր անձնավորություն էր, անհանգիստ բնավորություն, ըմբոստ և եռուն: Բոլոր ազգերի գրականությունը գիտեր, լավ ճանաչում էր, և մեծ ճաշակի տեր էր...

Չարենցի կորուստը հավիտյան ողբալի է, և եթե նա ողջ մնար, դեռ ինչեր կարող էր անել: Համենայն դեպս նա ինչ-որ տվեց, դա մի անմահ կոթող է հայ գրականության մեջ...

Ավ. Իսահակյան

Մեր դարի ճակատը պսակված է մի շարք բանաստեղծների պայծառ անուններով, Ֆրանսիայում՝ Ապոլիներն ու Էլյուարտը, Գերմանիայում՝ Ռիլկեն, Իսպանիայում՝ Գարսիա Լորկան, Ռուսաստանում՝ Մայակովսկին ու Եսենինը, Հայաստանում՝ Չարենցը ու Իսահակյանը:
Լուի Արագոն

Չարենցը, Չարենցը. “Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում”... նրան չհանդիպած՝ գիտեի արդեն իր այս քերթվածը: Սկսել էի արտասանել Ամերիկայի մեջ: Ամեն բառ բացատրել էի տվել ու գրեթե գոց գիտեի: Այն մինչև այսօր մեր երկրին, մեր հողին, մեր պատմությանը նվիրված ամենագեղեցիկ երգն է, գովաբանման աղոթքը:
Վիլյամ Սարոյան

Ինչի՞ հետ համեմատես “Ես իմ անուշը...”

Քիչ կլինի ասել, թե բանաստեղծություն է: Պոեմ էլ չէ վեպ՝ նույնպես... Որովհետև իրենց ծավալով ու մոնումենտալությամբ հանդերձ՝ դրանք կյանքը պատկերում են ինչ-որ մասշտաբներով:

“Ես իմ անուշը”, ավելի շուտ, բոլոր մասշտաբներից դուրս պաննո է՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանի: Դա անհիշելի ժամանակներից եկող Հայաս- Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո-դիմանկարն է: Դա մեր ազգի կենսագրության և վարքի կենդանի արտացոլքն է, մեր տառապանքների և փայփայած իդեալների, մեր անկումների ու վերելքների, մեր դրամատիկ ճակատագրի և անմեռ մնալու ձգտման գեղարվեստական խտացումն է ու բյուրեղացումը: Այդպիսի մի երկ աշխարհի բերելու համար պետք է ամենաքիչը կիսաստված լինել:

Մարտիրոս Սարյան

Չարենցի բանաստեղծությունները մեզ համար լի են գարնանային կայտառությամբ, հեղափոխության հողմով, հերոսականությամբ, և այդ պատճառով մենք էլ ավելի ենք սիրում դրանք, ի՞նչ իմանաս, թե որքան անհրաժեշտ են դրանք մեզ այսօր:

... Արևավառ, համեստ, խորաթափանց, խիզախ ու քնքուշ, հավերժ երիտասարդ այդ բանաստեղծը դարերի համար էլ կպահե իր երիտասարդությունը:

Իլյա Էրինբուրգ

ԲԱՌԱՐԱՆ

Ակաթ-լուսի ցուլք

անմարմին-մարմին չունեցող, ոչ նյութական

անհուն-հուն չունեցող

աշուղ-երգիչ

բլբուլ-թռչուն, սոխակ

բոսոր-ալ կարմիր

զանգատ-դժգոհություն

զունատ-գույնը գցած

դյութել-կախարդել, հմայել

թախիծ-տխրություն

կանթեղ-ջահ

հրահրան-հրահրել

հրկեզ-հրով կիզված, կրակով վառված

հուր-կրակ

յար-սիրելի մարդ

սազ-երաժշտական գործիք

տենչալ-ցանկանալ

տկար-թույլ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Կյանքը- երգի, երկնքի պես անհուն, անհուն	4
Գիտե՞ք որ գարուն է արդեն	5
Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում	6
Ինչքան որ հուր կա իմ սրտում-բոլորը քեզ	7
Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում	8
Դու-լուսե, անցար ու չկաս	9
Գիշերն ամբողջ հիվանդ , խելագար	10
Ոսկե փրփուր, ոսկե պուրպուր	11
Ինչքան աշխարհ սիրես ու աշխարհով հիանաս	12
Հնչում են օրերը, կանչում են	13
Էլի գարուն կգա, կբացվի վարդը	14
Ծիածանը	15
Հավելված	16
Բառարան	19

Գիրքը կազմեցին և նկարագարեցին Հիմնական դպրոցի 5-րդ
դասարանի սովորողները:

himnakann.mskh.am

mskh.am

ԵՐԵՎԱՆ 2015